ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
31/03/2015թ թիվ 59-Լ որոշմամբ

Փոփոխված է 23/06/2015թ թիվ 74-Լ որոշմամբ
21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)

ՀՀ կենտրոնական բանկում
«19» օգոստոսի 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-045

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻԱՄ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2015

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանում են Բյուրոյի կողմից մասնագիտական գիտելիքների ստուգման ոլորտները, ինչպես նաև ստուգման կարգն ու պայմանները:

Գ Լ ՈՒ Խ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) **դիմորդ՝** սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված որևէ ոլորտում (ոլորտներում) մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով սույն կանոններով սահմանված կարգով Բյուրո դիմած անձ:

Գ Լ ՈՒ Խ 3

ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

3. Բյուրոն սույն կանոնների համաձայն մասնագիտական գիտելիքների ստուգում իրականացնում է հետևյալ ոլորտներում՝

1) ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենքներ և Բյուրոյի կանոններ (ընդհանուր),

2) ԱՊՊԱ պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատում,

3) ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննության իրականացում,

4) ԱՊՊԱ պայմանագրի կնքում:

Բ Ա Ժ Ի Ն 2

ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 4

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՐԹԱԳՐՈՒՄԸ

4. Սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված որևէ ոլորտում (ոլորտներում) մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով Բյուրո կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ:

5. Մասնագիտական գիտելիքների ստուգմանը մասնակցելու նպատակով անձը պետք է նախապես հերթագրվի՝ Բյուրոյի ինտերնետային կայքի համապատասխան էջում սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված տեղեկությունները մուտքագրելու կամ այդ տեղեկությունները Բյուրոյի պատասխանատու աշխատակցին գրավոր ներկայացնելու միջոցով:

6. Հերթագրում կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են ստուգման ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Բյուրոյի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվան նախորդող ամսվա 5-ը:

7. Հերթագրվելու համար թեկնածուները լրացնում (հայտնում) են հետևյալ տեղեկությունները.

1) թեկնածուի անունը, ազգանունը,

2) ոլորտները, որոնցում թեկնածուն ցանկանում է անցնել մասնագիտական գիտելիքների ստուգում,

3) ստուգմանը մասնակցելու օրը և ժամը՝ ըստ հրապարակված ցանկի, ընդ որում, նշված օրը կամ ժամին ստուգումն իրականացնելու անհնարինության դեպքում (մասնավորապես՝ դիմորդների քանակի պատճառով) թեկնածուին առաջարկվում է լրացնել (հայտնել) մեկ այլ օր և (կամ) ժամ,

4) հեռախոսահամարը (քաղաքային, բջջային),

5) անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշը,

6) էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում): ***(7-րդ կետի 5-րդ ենթակետը լրացվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

8. Դիմորդը կարող է փոփոխել ստուգմանը մասնակցելու ժամը, օրը՝ ստուգմանը մասնակցելու օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ այդ մտադրության մասին տեղեկացնելով Բյուրոյի պատասխանատու աշխատակցին:

Գ Լ ՈՒ Խ 5

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

9. Բյուրոյի կողմից անձի մասնագիտական գիտելիքների ստուգում իրականացնելու համար սահմանվում է վճար 3000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ըստ յուրաքանչյուր դիմորդի: ***(9-րդ կետը փոփոխվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

10. Դիմորդները ստուգմանը մասնակցում են անձամբ՝ ստուգման օրը և ժամին ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,

2) սույն կանոնների 9-րդ կետով նախատեսված վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը:

11. Բյուրոյի կողմից անձի մասնագիտական գիտելիքների ստուգումն իրականացվում է համակարգչի օգնությամբ՝ թեստավորման միջոցով:

12. Թեստերը, դրանց փոփոխությունները և լրացումները հաստատվում են Բյուրոյի գործադիր տնօրենի հրամանով և դրանց հրապարակումը կամ այլ կերպ տարածումն արգելված է: ***(12-րդ կետը փոփոխվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

13. Թեստավորումն անցկացվում է Բյուրոյում կամ Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված Բյուրոյի հետ համագործակցող թեստավորման կենտրոնում՝ Բյուրոյի կամ թեստավորման կենտրոնի պատասխանատու աշխատակցի հսկողության ներքո:

14. Թեստերը բաղկացած են սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված մեկ կամ մի քանի ոլորտների (ըստ դիմորդի ցանկության) շրջանակում Հավելված 1-ով նախատեսված համապատասխան թեմաներից կազմված 25-ական հարցերից, և դրանց 4 հնարավոր պատասխաններից, որոնցից մեկն է միայն լիարժեք ճիշտ՝ բացառությամբ «ԱՊՊԱ պայմանագրի կնքում» ոլորտում մասնագիտական գիտելիքների ստուգման թեստերից, որոնք պարունակում են առաջադրանքներ ԱԱՄՊ ծրագրային համակարգի միջոցով

ԱՊՊԱ պայմանագրերի կնքման, կնքված պայմանագրերում փոփոխությունների իրականացման, դադարեցման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ: ***(14-րդ կետը փոփոխվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

15. Թեստում ներառված յուրաքանչյուր ոլորտի շրջանակում կազմված հարցերին պատասխանելու համար դիմորդին տրվում է 60 րոպե ընդհանուր ժամանակ՝ բացառությամբ «ԱՊՊԱ պայմանագրի կնքում» ոլորտում մասնագիտական գիտելիքների ստուգման թեստերից, որոնցում նշված յուրաքանչյուր առաջադրանքի համար թեստով սահմանված է կատարման առավելագույն ժամանակ: ***(15-րդ կետը փոփոխվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

16. Թեստավորումն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով: Յուրաքանչյուր դիմորդ նստում է իր համար նախատեսված համապատասխան համակարգչի դիմաց: Նախքան թեստավորումն սկսելը դիմորդներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ: Թեստավորման տևողությունը չի երկարաձգվում այն դիմորդների համար, ովքեր ներկայացել են ուշացած:

17. Թեստավորման ընթացքում դիմորդին արգելվում է օգտվել որևէ տեսակի հուշումներից, ծածկագրերից, աղմկել, հուշել, խոսել, հարցեր ուղղել կամ լքել սենյակը: Եթե դիմորդը լքում է սենյակը, ապա նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

18. Սույն կանոնների 17-րդ կետում նշված պահանջի չկատարման դեպքում դիմորդը համարվում է ոչ բարեհաջող հանձնած:

19. Թեստի հարցի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

20. Սխալ պատասխաններ են համարվում ՝

1) սխալ նշում կատարելը,
2) մեկից ավելի նշում կատարելը,
3) նշում չկատարելը:

21. Թեստավորումը բարեհաջող հանձնված է համարվում դիմորդի կողմից հարցերի 70 և ավելի տոկոսին ճիշտ պատասխանելը՝ բացառությամբ «ԱՊՊԱ պայմանագրի կնքում» ոլորտում մասնագիտական գիտելիքների ստուգման թեստերից, որոնք համարվում են բարեհաջող հանձնված թեստում ներառված բոլոր առաջադրանքները սահմանված ժամկետում անթերի կատարելու պարագայում: ***(21-րդ կետը փոփոխվել է 21/07/2015թ թիվ 78-Լ որոշմամբ)***

22. Թեստի հարցերի պատասխանները դիմորդի կողմից վերջնական հաստատվելուց (առաջադրանքները հաստատվելուց), ինչպես նաև թեստավորման համար սահմանված ժամանակն սպառվելուց հետո դիմորդը անմիջապես ստանում է իր կողմից հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, որտեղ արտացոլվում են դիմորդի միավորները՝ տոկոսային հարաբերությամբ: Հաշվետվությունը (երկու օրինակից) տպվում է անմիջապես և ստորագրվում դիմորդի կողմից. մեկ օրինակը պահպանվում է Բյուրոյում, մյուսը տրվում է դիմորդին:

23. *(ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 23.06.2015թ թիվ 74-Լ որոշմամբ)*

ԳԼՈՒԽ 6

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

24. Դիմորդը կարող է բողոքարկել թեստավորման արդյունքները՝ թեստավորման անցկացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Բյուրո: Բյուրոն վերանայում է թեստավորման արդյունքները և 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում բողոքարկողին արդյունքների վերաբերյալ:

Գ Լ ՈՒ Խ 7

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

25. Թեստավորումը բարեհաջող հանձնած դիմորդներին տրվում է համապատասխան հավաստագիր:

26. Հավաստագիր ստացած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը պահպանվում է Բյուրոյի տվյալների շտեմարանում, ինչպես նաև հրապարակվում է Բյուրոյի պաշտոնական կայքում:

27. Հավաստագիր ստացած Դիմորդի կողմից գրավոր դիմումի համաձայն դիմորդին կարող է տրամադրվել հավաստագրի թղթային ձևը՝ դիմում ներկայացնելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

28. Դիմորդներին հավաստագրեր տրվում են թեստավորման օրվանից հաշվված երկու տարի վավերականության ժամկետով: Ոլորտը կարգավորող կանոնների էական փոփոխության դեպքում՝ Բյուրոյի գործադիր տնօրենի հրամանով հավաստագրերի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել, բայց ոչ շուտ քան այդ մասին Բյուրոյի ինտերնետային կայքում համապատասխան տեղեկատվության հրապարակումից մեկ ամիս հետո:

Բ Ա Ժ Ի Ն 3

Գ Լ ՈՒ Խ 8

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. Սույն կանոնների ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ԱՊՊԱ վկայագրեր կնքելու իրավասություն ունեցող անձանց «ԱՊՊԱ պայմանագրի կնքում» ոլորտում մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով հերթագրման համար Բյուրոյի կողմից կարող է սահմանվել այլ ընթացակարգ:

	Մասնագիտական գիտելիքների ստուգման ոլորտ	Թեմաների շրջանակ
1.	ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենքներ և Բյուրոյի կանոններ (ընդհանուր)	1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կանոններ, 2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, 3. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք:
2.	ԱՊՊԱ պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատում	1. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013, 2. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման (80% և ավելի վնասի) դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանության կանոններ» RL 1-015, 3. «ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման կանոններ» RL 1-032, 4. Վնասների գնահատման լայնորեն կիրառվող մեթոդաբանություն, 5. ֆինանսական և վիճակագրական տվյալների վերլուծություն:
3.	ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննության իրականացում	1. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետների որակավորման, նրանց հետ կնքվող պայմանագրերի գրանցման

		և ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննության կանոններ» RL 1-014, 2. «ԱՊՊԱ պատահարում մեղավորության որոշման մեթոդաբանությունը» RL 1-044, 3. «ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման կանոններ» RL 1-032, 4. ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններ, 5. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք, 6. Դատաավտոտեխնիկական և հետքաբանական փորձաքննությունների իրականացման շրջանակներում լայնորեն կիրառվող այլ մեթոդաբանական ձեռնարկներ և գրականություն:
4.	ԱՊՊԱ պայմանագրի կնքում	1. «ԱՊՊԱ հիմնարար պայմանները» RL 1-001, 2. «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» RL 1-002, 3. «ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգ» RL 1-003, 4. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալներին վճարվող միջնորդավճարների առավելագույն չափ» RL 1-006, 5. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկ» RL 1-007, 6. ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի և ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափի վերաբերյալ գործող կանոններ, 7. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի նկատմամբ պահանջներ» RL 1-010,

		8. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող գովազդի նկատմամբ պահանջներ» RL 1-011, 9. «ԱՊՊԱ պայմանագիրը լրացնելիս և ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարի չափի հաշվարկում ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի հզորությունը որոշելու համար հիմք ընդունվող ինտերնետային կայքերի ցանկ» RL 1-012, 10. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջներ» RL 1-038, 11. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ բոնուս-մալուս համակարգի կիրառման» RL 1-040, 12. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատմության ստացման, վերանայման և բողոքարկման» RL 1-041, 13. ԱՊՊԱ պայմանագրերի կնքման ԱԱՄՊ ծրագրային համակարգ: